ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2020 թվականի թիվ 154 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 219-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 219-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ ԳՀ բաժնի վարիչի պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 219-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 562371.0 հազար դրամ գումարից՝ 31682,245 հազար դրամը փոխանցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 17746,538 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ 2020 թվականի ապրիլ ամսվա ընթացքում սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

X

25 մայիսի 2020թ.
ք. Իջևան